ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» հոկտեմբերի 2018 թվական N: 183 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ԳՆՄԱՆ և ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող ներառական կրթության ծրագիր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններում պարբերաբար իրականացնել ներառական կրթության ծրագրի կազմակերպման, սովորողների համար սննդի գնման և բաշխման, ինչպես նաև կայուն դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում սովորողների համար սննդի գնման և բաշխման համապատասխանության աուդիտ:

2. Աուդիտի աշխատանքներին ներգրավել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Սերոբյանին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Էմմա Պալյանին:
3. Աուդիտ իրականացնել 2018 թվականի գործունեության նկատմամբ:
4. Իրականացված աուդիտների վերաբերյալ ներկայացնել տեղեկանք:
5. Աուդիտի սկիզբը սահմանել 2018թ.հոկտեմբերի 2-ը, ավարտը՝ 2018թ.դեկտեմբերի 25-ը :

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է